

# Հայաստանի Հանրապետությունում ծխախոտային արտադրատեսակների մասին օրենսդրության կիրառումն ապահովելու նպատակով իրականացված մշտադիտարկման արդյունավետության գնահատում

Արևիկ Թորոսյան<sup>1,\*</sup>, Կարինե Աբրահամյան<sup>1</sup>, Մարիամ Մնացականյան<sup>2</sup>,  
Ալեքսանդր Բազարջյան<sup>1</sup>, Լենա Նանուշյան<sup>2</sup>, Արսեն Թորոսյան<sup>3</sup>

<sup>1</sup>Ակադ. Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, ՀՀ ԱՆ, Երևան, Հայաստան

<sup>2</sup>ՀՀ Առողջապահության նախարարություն, Երևան, Հայաստան

<sup>3</sup>ՀՀ Ազգային ժողով, Երևան, Հայաստան

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ներածություն.** «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրառումը ապահովելու նպատակով ձևավորվել է մշտադիտարկման խումբ և աշխատանքներն իրականացվել են բնակչության և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների համագործակցության շնորհիվ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիայի քարտուղարության աջակցությամբ համեմատվել է տարբեր երկրների լավագույն փորձը և ներդրվել է լավագույնը մեր երկրում:

**Մեթոդներ.** Մշտադիտարկման աշխատանքներն իրականացվել են Երևան քաղաքում և ՀՀ 10 մարզերում՝ երեք ուղղությամբ ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման, գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության արգելքների ու սահմանափակումների նկատմամբ: Մշտադիտարկումն իրականացվել է տե-

սազնման եղանակով, յուրաքանչյուր օբյեկտի պատասխանատուին տրամադրվել է օրենքով նախատեսված սահմանափակումների վերաբերյալ իրազեկող թերթիկ, ինչպես նաև իրականացվել են իրազեկման աշխատանքներ: Օրենքի դրույթների խախտման հայտնաբերման դեպքում լրացվել է խախտման վերաբերյալ ձևաթուղթ, որը ստորագրվել է օբյեկտի պատասխանատու անձի կողմից: Մշտադիտարկումը և տվյալների արձանագրումն իրականացվել են էլեկտրոնային հարցաշարերի միջոցով: Մշտադիտարկման արդյունքներն ամփոփ կերպով ներկայացվել են ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին (ԱԱԻ) և, այնուհետև, տրամադրվել են վերահսկողություն իրականացնող տեսչական մարմիններին:

**Արդյունքներ.** 2021-2022թթ. ժամանակահատվածում իրականացվել է թվով 3252 օբյեկտի մշտադիտարկում, որից՝ 77.9% օգտագործման, 75.7% գովազդի և 100.7% իրացման վերաբերյալ: Արդյունքում հայտնաբերվել են հետևյալ խախտումները. իրացման՝ թվով 996, օգտագործման՝ թվով 522 և գովազդի՝ թվով 832 խախտում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների կրկնակի

\*Corresponding author: torossianarevik@gmail.com  
Published online: 29 December 2023

ստուգումների ժամանակ արձանագրվել են կրկնակի խախտումներ, ինչի արդյունքում կիրառվել են սույն օրենսգրքով նախատեսված սուղանքներ:

**Եզրակացություն.** ՀՀ կառավարության գերակա նպատակներից են բնակչության առողջության պահպանումը և բարելավումը, որի խնդրո առարկաներն են բնակչության միջին կենսամակարդակի բարելավումը և առողջության բաշխվածության անհավասարության կր-

ճատումը: Մոնիտորինգային խմբի արդյունավետ աշխատանքները հիմք են հանդիսացել, որ այն ներգրավվի ռազմավարության միջոցառումներում և ֆինանսավորվի պետության կողմից:

***Հիմնաբառեր.** ԱՀԿ, ԾՊՇԿ, ծխախոտային արտադրատեսակներ, մոնիտորինգ, վարչական իրավախախտումներ, տուգանք, տեսչական մարմիններ:*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծխախոտային համաճարակը բնակչության առողջության համար ամենամեծ վտանգներից մեկն է: Համաձայն Առողջապահական համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների՝ ծխախոտային արտադրատեսակների օգտագործման հետևանքով ամեն տարի մահանում է ավելի քան 8 մլն մարդ, որից ավելի քան 1.2 մլն չձխողներն են, որոնք ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը [1]:

Համաձայն 2022 թ. «Առողջություն և առողջապահություն» վիճակագրական տարեգրքի [2]՝ Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններից (ՈՎՀ) մահացության բեռում արյան շրջանառության համակարգի հիվանդությունները (ԱՇՀՀ) զբաղեցնում են առաջին տեղը՝ 48.2%, որոնց հաջորդում են չարորակ նորագոյացությունները (ՉՆ)՝ 15.3%, շաքարային դիաբետը (ԾԴ)՝ 1.1%, շնչառական համակարգի օրգանների հիվանդությունից մահացությունը կազմում է 8.4% և առաջին անգամ Հայաստանում հավաքագրվել է ԿՈՎԻԴ-19 վիճակագրությունը: Վերջինիս արդյունքները ցույց են տալիս, որ մահացության մեջ այն կազմում է 15.8%:

Հարկ է նշել, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, ՈՎՀ-ից մահացության բեռը շուրջ 93.0% է:

2020 թ. փետրվարի 13-ին ընդունվեց «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքը (Օրենք) [3], որի նպատակն է ներկա և ապագա սերունդներին պաշտպանել առողջության վրա ծխախոտահումքի, ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների օգտագործմամբ պայմանավորված բացասական ազդեցության, ծխախոտի ծխի վնասակար հետևանքներից, սոցիալական, տնտեսական ոլորտների և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ներ-

գործությունից, ինչպես նաև բնակչության ընկալումներում ծխախոտային արտադրատեսակների, դրանց փոխարինիչների օգտագործումը որպես անառողջ և մերժելի վարքագիծ արմատավորելուն:

Օրենքի կարգավորումների համաձայն՝ ծխելն արգելվեց մի շարք փակ, կիսափակ և բաց հանրային տարածքներում, ինչպիսիք են՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների շենքերը, ուսումնական հաստատությունները, երեխաների համար նախատեսված խաղահրապարակների և խաղային պուրակները, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տարածքները, հանրային սննդի օբյեկտները, հյուրանոցները, առևտրի կենտրոնները, հասարակական տրանսպորտի կանգառների ծածկերի տակ և մի շարք այլ վայրերը: Բացի դրանից, արգելվեց ծխախոտի գովազդի, վաճառքի խթանման և հովանավորության բոլոր ձևերը:

ՀՀ-ում ծխախոտային արտադրատեսակներ օգտագործող դեռահասներին և վերարտադրողական տարիքի կանանց, որոնք դիմում են բժշկական հաստատություններ, նիկոտինից կախվածության բուժման և հետևանքների վերացմանն ուղղված բժշկական օգնությունը տրամադրվում է անվճար հիմքունքներով:

Օրենքով նախատեսված արգելքների խախտման համար նախատեսված պատասխանատվությանը անդրադառնալով՝ հարկ է նշել, որ դրանց համար նախատեսված է վարչական պատասխանատվություն՝ տուգանքի ձևով:

2004թ. հոկտեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ԱՀԿ «Ծխախոտի դեմ պայքարի մասին» Շրջանակային կոնվենցիան (Կոնվենցիա կամ ԾՊՇԿ), որը մշակվել է ի պատասխան ծխախոտային համաճարակի գլոբալացման:

Կոնվենցիան ապացուցահեն պայմանագիր է, որը վերահաստատում է բոլոր մարդկանց՝ առողջության առավելագույն բարձր մակարդակ ունենալու իրավունքը: Կոնվենցիայի նպատակն

է «պաշտպանել ներկա և ապագա սերունդներին ծխախոտի օգտագործման առողջական, սոցիալական, շրջակա միջավայրի և տնտեսական կործանարար հետևանքներից և ծխախոտի ծխի ազդեցությունից»: Կոնվենցիան հաստատում է այս նպատակին հասնելու համար պահանջարկի կրճատմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաև առաջարկին ուղղված ռազմավարությունների կարևորությունը, և Կողմերին խրախուսում է իրականացնել պայմանագրով նախատեսված միջոցառումների շրջանակից դուրս միջոցառումներ և:

Համոզված լինելով ծխախոտի՝ որպես մարդու առողջության համար սպառնալիք և կայուն զարգացման խոչընդոտ լինելու մեջ, կարևոր է նաև վերջինիս դեմ արդյունավետ պայքարը, որը կայուն զարգացման խթանման գործում դառնում է ավելի ու ավելի ակնհայտ:

«ԾՊՇԿ 2030» նախագիծն աջակցում է այն Կողմերին, որոնք իրավասու են ստանալու Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնություն (ԶՊՕ)՝ Կոնվենցիայի իրականացումն արագացնելու միջոցով Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Նման աջակցություն ստացող Կողմերն ընտրվել են հայտադիմումի ներկայացման գործընթացի միջոցով, և այս նախագծի երկրորդ փուլի շրջանակում անմիջական աջակցություն ստանալու համար 28 հայտատուներից ընտրված ինը Կողմերից մեկն է:

Ծխելու դեմ պայքարի շրջանակներում ծխախոտային արտադրատեսակների մշտադիտարկման և կանխարգելիչ միջոցառումները ևս հակածխախոտային քաղաքականության արդյունավետ միջոցներից են: Ծխախոտային արտադրատեսակների հսկողությունը և մշտադիտարկումն իր մեջ ներառում է ծխախոտային արտադրատեսակների օգտագործման ցուցանիշների մշտահսկում (հաճախ ընկալվում է որպես ծխախոտային արտադրատեսակների տարածվածության և միտումների մշտադիտարկում), երկրորդային ծխի մշտադիտարկում և ծխախոտային տարածվածության ու երկրորդային ծխի վերաբերյալ ընդունված կանոնակարգերի իրականացման մշտադիտարկում:

Կարևոր է նշել, որ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի ազդեցության արդյունավետ մոնիտորինգը պետք է լինի շարունակական գործընթաց և չդիտարկվի որպես միանգամյա գործողություն: Միտումները փոխվում են ժամանակի ընթացքում, և լավ մոնիտորինգը պետք է ընկալվի որպես երկարաժամկետ պարտավորություն, որը պետք է լավ պլանավորվի և կանոնավոր կերպով իրականացվի:

Երկրները պետք է նաև նպատակ ունենան վերահսկել ծխախոտի դեմ պայքարի քաղաքականության կիրարկումը, ինչպես նաև ծխախոտի արդյունաբերության ցանկացած գործունեություն, որը կարող է խանգարել նոր կամ առկա քաղաքականությանը: Ընդ որում, նման մոնիտորինգը պետք է իրականացվի կառավարության և ծխախոտի արդյունաբերության միջև միջուրտային փոխկապակցված համագործակցության միջոցով:

Հարկ է նշել նաև, որ ծխախոտի արդյունաբերության միջամտությունը տարբեր ձևեր ունի, բայց բոլորն էլ նպատակ ունեն թուլացնել, խաթարել և խոչընդոտել ծխախոտի դեմ պայքարի արդյունավետ քաղաքականությունը: Որոշ գործողություններ իրականացվում են բաց, իսկ մյուսները՝ ավելի գաղտնի: Ուստի, ցանկացած հակածխախոտային համապարփակ միջոցառում, որը հաջողվել է առաջատար երկրների կողմից և ունի լավ կիրառելիության բնակչության շրջանում, անհրաժեշտ է ներառել ազգային ռազմավարություններում:

Հենց նմանատիպ միջոցառման օրինակ է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների կիրարկման ապահովման նպատակով մշտադիտարկման համակարգը, որի հիմնական նպատակն է Օրենքի կիրարկման ապահովման նպատակով մշտադիտարկման համակարգի ներդրումը և վերջինիս աշխատակարգի մշակումը:

## ՄԵԹՈՂՆԵՐ

ԱՀԿ ԾՊՇԿ քարտուղարությունը ՀՀ Առողջապահության նախարարության և ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի հետ համատեղ «ԾՊՇԿ 2030» ծրագրի շրջանակներում մշակել է մշտադիտարկման աշխատանքների նկարագիր, որը հաստատվել է Առողջապահության նախարարի 2021 թ. հոկտեմբերի 12-ի թիվ 3855-Ա հրամանով [3]:

Մշտադիտարկող խումբը կազմված էր մարզային ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (ՀԿԿԱԿ) մասնաճյուղերի աշխատակիցներից, որոնք անցել էին վերապատրաստում, ինչպես նաև իրականացվել էին համապատասխան պիլոտային աշխատանքներ:

Մշտադիտարկումը ճիշտ ապահովելու համար բազմակի առցանց հանդիպումներ են եղել առաջատար երկրների փորձագետների և

**ԱՐԴՅՈՒՆՔԵՐ**

ԱՀԿ փորձագետների հետ, ինչի արդյունքում մշակվել է մեթոդաբանությունը, ինչպես նաև առցանց շտեմարանի նախատիպը և հետագայում ներդրվել է ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի բազայում: Մշտադիտարկումն իրականացնելու համար մշակվել և առցանց հարթակում ներբեռնվել են հարցաշարեր, որոնք կազմվել են ըստ գործող Օրենքի դրույթի:

Մշտադիտարկման աշխատանքներն իրականացվել են Երևան քաղաքում և ՀՀ 10 մարզերում: Յուրաքանչյուր մարզում մշտադիտարկման աշխատանքներն իրականացվել են 3 ուղղությամբ՝

- 1) ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացման արգելքների նկատմամբ.
- 2) ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործմանը ներկայացվող արգելքների և սահմանափակումների նկատմամբ.
- 3) ծխախոտային արտադրատեսակների, դրանց պատկանելիքների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների գովազդի, իրացման (վաճառքի) խթանման և հովանավորության արգելքների ու սահմանափակումների նկատմամբ:

Հարցաշարերի և բազաների հավաքումն իրականացվել է մշակված առցանց հարթակի միջոցով, յուրաքանչյուրն ունեցել է իր նույնականացման ծածկագիրը և մուտքագրման հարթակը՝ ըստ մարզերի:


Մշտադիտարկման աշխատանքները մեկնարկել են 2021 թ. նոյեմբերի 1-ից և ավարտվել նույն թվականի դեկտեմբերի 30-ին: Արդյունքում (նկար 1)՝

1) իրականացվել է թվով 3252 օբյեկտի մշտադիտարկում, այդ թվում՝ 77.9% օգտագործման, 75.7% գովազդի և 100.7% իրացման վերաբերյալ.

2) հայտնաբերվել է իրացման 996, օգտագործման 522 և գովազդի 832 խախտում:

Իրավախախտումների վերաբերյալ համապատասխան հաշվետվություններն ուղարկվել են ոլորտը վերահսկող տեսչական մարմին՝ հետագա գործունեությունն ապահովելու նպատակով:

Բացի դրանից, յուրաքանչյուր ուսումնասիրվող օբյեկտում իրականացվել են իրազեկման աշխատանքներ՝ տրամադրելով իրազեկման թերթիկ, իսկ Օրենքի դրույթների խախտման հայտնաբերման դեպքում մշտադիտարկողը կազմել է խախտման վերաբերյալ ձևաթուղթ: Աշխատակարգի համաձայն՝ վերջինս տրամադրվել է յուրաքանչյուր մշտադիտարկվող օբյեկտին՝ անկախ խախտման հայտնաբերման հանգամանքից: Խախտման ձևաթղթում նշվում է օբյեկտի անվանումը, պատասխանատուի անուն-ազգանունը, տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ՀՎՀՀ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ նշումներ: Աշխատակարգը սահմանում է նաև, որ հայտնաբերված խախտման մասին հաղորդելու հրատապության դեպքում (ծխելն արգե-



**Նկար 1.** Մշտադիտարկման տեսակը և իրավախախտումները

լող նշանի մոտակայքում ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հայտնաբերման դեպքում), ինչպես նաև իրազեկման աշխատանքների իրականացումից հետո, կրկնակի այցելության ժամանակ մշտադիտարկում իրականացնողը նույն խախտումներն արձանագրելու դեպքում (առանց կրկնակի իրազեկում իրականացնելու) անձամբ ներկայացնում է դիմում-բողոք համապատասխան ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանում գրանցված բոլոր մահերի շուրջ 93%-ը պայմանավորված է ՈՎՀ-ներով, իսկ 0.4%-ը՝ վարակիչ հիվանդություններով:

Ծխելու դեմ պայքարին ուղղված միջոցառումների հաջողության հիմք են հանդիսացել վերջին երկու տասնամյակների ընթացքում ՀՀ-ում իրականացված բարեփոխումների արդյունքում կուտակված գիտելիքներն ու փորձը՝ ԱՀԿ ուղեցույցները և առաջարկությունները,

ԱՀԿ և այլ փորձագիտական առաքելությունների առաջարկները, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության երկրների փորձի հետ, և այն համահունչ է Համընդհանուր առողջապահական ծածկույթի ապահովման ընդհանուր սկզբունքներին և դրույթներին, ՄԱԿ-ի «Օրակարգ-2030» հռչակագրին և Կայուն զարգացման նպատակներին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա նպատակներից են բնակչության առողջության պահպանումը և բարելավումը, որի խնդրո առարկաներն են բնակչության միջին կենսամակարդակի բարելավումը և առողջության բաշխվածության անհավասարության կրճատումը:

Մոնիտորինգային խմբի արդյունավետ աշխատանքները հիմք են հանդիսացել, որպեսզի այն ներգրավվի՝ ռազմավարության միջոցառումներում և ֆինանսավորվի պետության կողմից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Գլխավոր էջ. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն. <https://www.who.int/news-room/factsheets/detail/tobacco>. Դիտված է օգոստոսի 25, 2023
- Անդրեասյան Դ., Բազարյան Ա. և այլք: Առողջություն

և առողջապահություն: Վիճակագրական տարեգիրք, Հայաստան 2022

- Գլխավոր էջ. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ. <https://www.arlis.am/>. Դիտված է օգոստոսի 25, 2023

## Assessment of the Effectiveness of Monitoring to Ensure the Implementation of Tobacco Law in the Republic of Armenia

Arevik Torosyan<sup>1</sup>, Karine Abrahamyan<sup>1</sup>, Mariam Mnatsakanyan<sup>2</sup>, Alexander Bazarchyan<sup>1</sup>, Lena Nanushyan<sup>2</sup>, Arsen Torosyan<sup>3</sup>

<sup>1</sup>Acad. Avdalbekyan National Institute of Health, MoH RA, Yerevan, Armenia

<sup>2</sup>Ministry of Health of RA, Yerevan, Armenia

<sup>3</sup>National Assembly of RA, Yerevan, Armenia

### ABSTRACT

**Introduction:** In order to ensure the implementation of the tobacco law “On the reduction and prevention of health damage caused by the use of tobacco products and their substitutes” provisions a tobacco monitoring group was formed and the joint cooperation was carried out within the state bodies. With the support of the Secretariat of the Framework Convention on Tobacco Control of the World Health Organization, the best practices of the lead countries were compared and implemented in our country.

**Methods:** Monitoring activities were carried out in Yerevan and in 10 regions of the Republic of Armenia, in three directions, on sale of tobacco products, their belongings, and substitutes for tobacco products, advertising, sales promotion and sponsorship prohibitions and restrictions. The monitoring was carried out by means of a visit to the different objects, the person in charge of each object was provided with an information sheet on the restrictions provided by the law, during which, also it was carried out the awareness activities on the tobacco law and restrictions and the relative fines on each. If a violation of the provisions of the law is found, a violation form is drawn up and signed by the person responsible for that facility. Monitoring and data recording was done using electronic questionnaires and e-platform. The results of the monitoring were presented in a reporting form to National Institute of Health, MoH, furthermore it was provided to the relevant inspection body.

**Results:** During the period of 2021-2022, the monitoring of 3252 objects was carried out, of which 77.9% were for use, 75.7% for advertising and 100.7% for sale. As a result, the following violations were found: 996 vi-

violations of sale, 522 violations of use, and 832 violations of advertising. During repeated inspections of the provisions of the RA Code on administrative offenses, repeated violations were recorded, as a result of which fines provided for by this code were applied.

**Conclusion:** One of the priority goals of the Government of the Republic of Armenia is the promotion of population health, the issues of which are the improve-

ment of the average level of the population and the reduction of the inequality in the distribution of health. The effectiveness and impact of the monitoring group activities was the basis for it being involved in the Government strategy activities and also financed by the state.

**Keywords:** WHO, FCTC, tobacco products, monitoring, administrative offenses, fine, state bodies.

## Оценка эффективности мониторинга по обеспечению реализации Закона о табаке в Республике Армения

Արեւիկ Թորոսյան<sup>1</sup>, Կարինե Աբրաամյան<sup>1</sup>,  
Մարիամ Մնացականյան<sup>2</sup>, Ալեքսանդր Բազարչյան<sup>1</sup>,  
Լենա Նանուշյան<sup>2</sup>, Արսեն Թորոսյան<sup>3</sup>

<sup>1</sup>Национальный институт здравоохранения им. акад. Авдалбекяна, МЗ РА, Ереван, Армения

<sup>2</sup>Министерство здравоохранения РА, Ереван, Армения

<sup>3</sup>Национальное Собрание РА, Ереван, Армения

### АБСТРАКТ

**Введение:** В целях обеспечения реализации положений Закона о табаке «О снижении и предотвращении вреда здоровью, причиняемого употреблением табачных изделий и их заменителей» создана группа по мониторингу табака и осуществляется совместное сотрудничество в рамках государственных органов. При поддержке Секретариата Рамочной конвенции по борьбе против табака Всемирной организации здравоохранения были сопоставлены и внедрены в нашей стране лучшие практики стран-лидеров.

**Методы:** Мониторинговые мероприятия были проведены в городе Ереване и в 10 регионах Республики Армения по трём направлениям: продажа табачных изделий и их заменителей, запреты и ограничения рекламы, стимулирования сбыта и спонсорства. Мониторинг проводился путём посещения различных объектов, ответственному за каждый объект был предоставлен информационный листок об ограничениях, предусмотренных законом, в ходе которого также проводились разъяснительные мероприятия по вопросам табакокурения, закон и ограничения, а также соответ-

ствующие штрафы по каждому из них. В случае выявления нарушения положений закона составлялся акт о нарушении, который подписывается ответственным за данный объект лицом. Мониторинг и запись данных осуществлялись с использованием электронных анкет и электронной платформы. Результаты мониторинга были представлены в отчётной форме в Национальный институт здравоохранения МЗ РА, а также переданы в соответствующий проверяющий орган.

**Результаты:** За период с 2021 по 2022 гг. проведён мониторинг 3252 объектов, из них 77.9% предназначены для использования, 75.7% для рекламы и 100.7% для продажи. В результате были выявлены следующие нарушения: 996 нарушений продажи, 522 нарушения использования и 832 нарушения рекламы. В ходе неоднократных проверок положений Кодекса РА об административных правонарушениях были зафиксированы неоднократные нарушения, в результате которых были применены штрафы, предусмотренные этим Кодексом.

**Заключение:** Одной из приоритетных целей Правительства Республики Армения является укрепление здоровья населения, вопросами которого являются улучшение среднего уровня жизнедеятельности населения и сокращение неравенства в распределении здоровья. Эффективность и влияние деятельности мониторинговой группы послужили основой для её участия в деятельности государственной стратегии, а также для финансирования её государством.

**Ключевые слова:** ВОЗ, РКБТ, табачная продукция, мониторинг, административные правонарушения, штраф, государственные органы.